

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԵՆԻ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՅԹՆԵՐ

1. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՏՀ կամ Համալսարան) Որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ Բաժին) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի առաքելությունը Համալսարանում որակի ապահովման (ՈԱ) մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է:
2. Բաժինը գործում է Արցախի Հանրապետության օրենսդրության համապատասխան, Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:
3. Բաժինը սույն կանոնակարգով սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է Համալսարանի կառուցվածքային այլ ստորաբաժանումների և արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:
4. Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումներն, ինչպես նաև Բաժնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացնում է Համալսարանի Գիտական խորհուրդը՝ Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ:

#### 2 ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

##### 2.1 Որակի ապահովման բաժնի խնդիրներն են՝

- մշակել Համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը և աջակցել դրանց իրագործմանը,
- բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները Համալսարանում՝ ապահովելով ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածությունը,
- Համալսարանի ինստիտուցիոնալ և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար կանոնակարգային և կազմակերպական հիմք ստեղծել,
- կազմակերպել որակի ներքին ապահովման գործընթացների հաշվետվողականությունը՝ աջակցելով ներքին և արտաքին շահակիցների առջև Համալսարանի հաշվետվողականությանը, դրանց տրվող տեղեկատվության թափանցիկությանը, մատչելիությանը և օբյեկտիվությանը,
- ապահովել կապը Համալսարանի որակի ներքին ապահովման և արտաքին գնահատման գործընթացների միջև,
- հաստատել և ամրապնդել կապեր այլ բուհերի որակի ներքին ապահովման կենտրոնների հետ:

## 2.2. Բաժնի գործառնությունն են՝

- մշակել Համալսարանի որակի ներքին ապահովման կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- մասնակցել Համալսարանի որակի ապահովման տարատեսակ գործընթացների համար գործիքակազմերի մշակման աշխատանքներին,
- կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման գործընթացն ու մասնագիտական վերապատրաստումը,
- սահմանել Համալսարանի համար որակի ապահովման ներքին չափանիշները և չափորոշիչները՝ ԱՀ օրենսդրության համաձայն,
- համակարգել և աջակցել բոլոր ստորաբաժանումներում որակի ապահովման գործընթացների իրականացմանը,
- կրթական ծրագրերի հաստատման, դրանց ընթացիկ մշտադիտարկման և պարբերաբար վերանայման համար մշակել որակի ներքին ապահովման ընթացակարգեր, համակարգել և աջակցել դրանց իրականացմանը,
- համակարգել և իրականացնել ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացները,
- մշակել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման մեթոդների արդյունավետության գնահատման ընթացակարգերը և գործիքակազմը,
- ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության, գործընթացներում ուսանողների, շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,
- կազմակերպել Համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացը, համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը,
- համագործակցել ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ և համակարգել Համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ,
- համագործակցել Համալսարանի Գիտական խորհրդի Որակի կառավարման հանձնաժողովի հետ և աջակցել նրա աշխատանքներին,
- սույն կանոնակարգով սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցել Համալսարանի կառուցվածքային այլ ստորաբաժանումների և արտահամալսարանական տարբեր կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:

## 3 ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3.1 Բաժինը ղեկավարում է բաժնի պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է Համալսարանի ռեկտորը:
- 3.2 ՈԱ բաժնի պետի հետ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր, որը հիմք է հանդիսանում նրա հրամանագրման համար:
- 3.3 Բաժնի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կատարում Համալսարանի ռեկտորը՝ բաժնի վարիչի կամ Որակի կառավարման հանձնաժողովի նախագահի առաջարկով:
- 3.4 Բաժնի աշխատակիցների աշխատանքային պարտականությունները սահմանվում են համապատասխան պաշտոնի անձնագրերով:

#### 4. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ և ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

4.1.Սույն կանոնակարգը և նրանում կատարվող փոփոխությունները որակի կառավարման հանձնաժողովի ներկայացմամբ հաստատում է Համալսարանի Գիտական խորհուրդը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ն.Ա.Միքայելյան

Գիտական քարտուղար՝

Ա.Ա.Առաքելյան